

վերայ այդ «խմբի» գործունեութեան արդիւնքն էլ կշափուի: ուրիշ քարծրագոյ խմբերինն էլ: Պ. Ս.-ին, որ երկար ժամանակ ուսուցիչ եւ տեսուչ է եղել ներքեւի չէ այնպէս կարծել տալ: իբրեւ թէ կատարեալ մարդիկ, անձնագորհ հոգեւորականներ պատրաստելը մի քաժակ ջուր խմելու նման դիւրին գործ է. իբր թէ շատ դիւրին է, այնպիսի մի ժամանակ երբ ամբողջ կրթուած երիտասարդութիւնը Բագու է վազում՝ անձնագործեան այն ուզին ներշնչել աշակերտներին, որ քոլորեքեան անխնտիր աւարտման վկայականը ստանալուն պէս Տաճկաստանի եւ Պարսկաստանի խուլ անկիւնները վազեն: Սակայն փոքր Աստուծոյ մէնք տասնեակներով կարող ենք ցոյց տալ վերջին շրջանի ծեմարանականներ, որոնք Բագուն չէ հրապուրում, որոնք համեստ հասարակական գործիչներ են ոչ միայն մեր երկրի, այլ եւ Պարսկաստանի եւ Տաճկաստանի խուլ անկիւններում: որոնք պատրաստ են յետ ընկած զիւղերում՝ իսկ քահանայ լինելու եւ խոչընդոտների են հանդիպում: Թող պարծենայ, ով աւելին է արել, ով այնպիսի կուսակրօններ է հանդէս բերել, որոնք դպրոցական նստարաններից ելնելուն պէս ժողովուրդ հովուելու ընդունակ են լինում՝ եւ ուրիշ պատրաստութեան կարօտութիւն չունին:

Կանգ առնենք այստեղ, չափազանց շեղակարացելու համար մեր խօսքը: Թէպէտ ասելիք դեռ շատ է մնում: Մեր եզրակացութիւնն այն է, որ Հիւսիս-արեւելի ընդհանուր պահանջներ դնելով: մինչեւ այժմ՝ ծեմք առած իրական միջոցներն անտես անելով եւ երեւակայական յանցանքներ քարդելով ծեմարանողների վերայ: Մենք ամենեւին դէմ չենք, որ հոգեւորական նոր սերունդի իւրաքանչիւր քայլը քննադատութեան ենթարկուի եւ պախարակուի ինչ որ պախարակելի է. քայց ի՞նչ բարեբար ազդեցութիւն կարող են ունենալ այն քննադատները, որոնք մի բերան պախարակում են եւ ոչ մի գովաստի ու քաջակերութեան արժանի գիծ չեն գտնում:—Մի ցուլ բժշկելու համար պէտք է նախ լուռ ուսումնասիրել նորա ծագման պատճառները. պ. Ս. եւ իւր համախոհները այդ նեղութիւնը երբեք յանձն չեն առել. մի

քանի կցկաւոր տեղեկութիւնները ընդհանուր խօսքերով կապկաւած՝ ահա նոցա պատմագիտական պաշարը հայ հոգեւորականութեան անցեալի մասին—եւ ինչպիսի՞ համարձակ եզրակացութիւններ չեն հանում՝ նոցա այդ ողորմելի պաշարից: Ընդունենք սակայն, թէ նոցա եզրակացութիւններն ուղիղ են, թէ մեր հոգեւորականութեան մէջ նոր կեանք մտցնելու մինչեւ այժմ՝ եղած փորձերն եւս սխալ են եղել եւ անյաջող. ի՞նչ է արդեօք անաշատ հրապարակախօսի պարտքը. եղածը դատաւարտելով միայն քաւականանալ, թէ նոր ճանապարհներ ցոյց տալ: Երանի չէր ամենախիստ կեղծով քննադատէին մեր ամէն մի արարքը, միայն թէ քննադատութեան հիմք կենդանի իրողութիւնները կազմէին: եւ ոչ կանխակալ կարծիքներ, քննադատութեան չափ արդարամտութիւնն ու գործի քարոքմանը նպատակու ցանկութիւնը, եւ ոչ թէ կուսակցական նեղ ոգին, արմատացած նախապաշարմունքները: Պ. Ս. այդպիսի անաշատ քննադատ լինելուց շատ հեռու է, ուստի նորա «հրապարակախօսական խոհերը, եթէ եօթանասուն անգամ էլ տպուին՝ «հին ցաւը դարմանելուն չեն նպաստի ոչնչով:

Կ. Վ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ

Ազգիս Վեհափառ Հայրապետը իւր վերջին ճանապարհորդութիւնից ողջամբ Մայր Աթոռը ժամանելուց յետոյ մի քանի օր անցած բարեհաճեց Բիւրականի Հայրապետական ամբարանոցն երթալու, ուր սակայն երեք օր միայն մնալով վերադարձաւ ա. Սջմիածին:

Եունիսի 30-ին Նորին Սրբութիւնը ուղեկցուեալ Բաբելն. Կորբիւն վարդապետի կրկին ճանապարհ ընկաւ դէպի Հաղարծին, ուր մտադիր է մնալու մի ժամանակ:

Եունիսի 29-ին, ա. Սահակ և ա. Մեսրոպի տօնի օրը, Մայր Աթոռից Օշական ուղեւորուեցաւ. Նորին Սրբութիւնը ուղեկցութեամբ միտքանութեան բազմաթիւ անդամոց: Պատարալիչն էր Հ. Խաչիկ Ժ. Վ. Դատեան:

Պատարագից յետոյ Վեհափառ Հայրապետի հրամանով քարոյ խօսեց այդ օրուայ տօնի առթիւ Հ. Կարապետ վարդապետը:

Նոյն օրը ուխտ էին գնացել Օշական Ճեմարանի աշակերտները թէ ս. Էջմիածնից և թէ Բիւրական ամրանոց դնացողները ուրոնք միաբանութեան անդամներն և ուսուցիչներն հետ միասին ճաշեցին վանքի այգում:

Եունիսի ընթացքում Մայր Աթոռ ժամանեցին Արժ. Դարերգին Սաթուհեանց, Բագրատ Վարդապետնց և Մատթէոս վարդապետները: Վերջինս մի քանի օրից յետոյ կրկին ուղևորուեցաւ իւր պաշտօնատեղին:

Մայր Աթոռից մեկնելէն տկարութեան պատճառով՝ Սինօղի անդամ Արժ. Եուսիկ վարդ., Հմայեակ վարդ., Դարերգին վ. Եովսէփեան և Բարդուղիմէոս վարդ.:

Մայր Աթոռին պատկանող զիւղերն այս տարի կապալով շտրուեցան, այլ նշանակուեցան յատուկ կալաքաններ միաբաններէից, որոնք անմիջապէս զիւղացիներէից պիտի սառնան ս. Էջմիածնի հասոյթները:

Վաղարշապատի համար նշանակուած է Արժ. Եղիա վարդապետ, Օշականի համար նշանակուած Արժ. Ստեփան վարդ., տկարութեան պատճառով այնտեղ ուղարկուեցաւ Ծնորհ. Գրիգոր սարկաւազ, Եղուարդ ուղարկուել է Արժ. Ղուկաս վարդ. և Մաստարայ Արժ. Պետրոս վարդապետը:

ԺԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ.

Այս տարի ևս նախորդ տարիների նման Նորին Սրբութեան հրամանով Ճեմարանում ամառը մնացող աշակերտների մի մասն ամառանոց ուղարկուեցաւ Բիւրականի Հատիճայ և Դեղարդայ վանքերը:

Բացի սոցանից մեծ աշակերտներից մի խումբ ճանապարհորդելու գնաց զէպի Սեան և իւր շրջակայքը իսկ ամսոյս 11-ին Տեսուչ Հ. Կարապետ վարդապետը մի խումբ Լսարանցոց հետ ճանապարհորդութեան ելու զէպի Երեանայ և Արցախի թեմերի վանքերը:

ՏԱԿԱՀԱՅԲ.

— Կրօնական Ժողովը 6 յունիս սովորական նիստը գումարեց Պատրիարքարանի մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոսի Յովհաննէսեանի:

Ժողովը հրաւիրելով թուրքերէն թղթակցութեանց զիւանի տնօրէն Կարապետ էֆ. Խաչատուրեանը, լսեց դատական նախարարութենէն անցեալ շաբթու հասած Թէղթերէն և այս առթիւ բաւական ատեն խորհրդակցութիւններ ընելով, քիչ ժամանակ ունեցաւ զրադելու իր օրակարգին վրայ գտնուած խնդիրներով:

Ետիրնէի առաջն. տեղապահ Պօղոս վարդապետ Խօշտամեանի խնդրագիրը նկատողութեան առնելով որոշեց զրել իրեն որ սպասէ ժամանակ մը ևս, և հարկ եղած պատուէրները տալով Արսէն քահանայի և զգուշացնելով իր ընթացքէն, յանձնարարեց Գաւառ. Վարչութեան որ տեղապահին ամսականները անյապաղ վճարուին:

Արշակ և Յովհաննէս սարկաւազներուն թափառական վիճակը նկատողութեան առնելով, որոշեց յառաջիկայ նիստին կանչել Կրօն. Ժողովոյ ատենանը:

Վանայ Ծաղկան զիւղի Ս. Սահակ եկեղեցիին համար յատկապէս պատրաստուած Ս. Աստուածածնայ պատկեր մի արտօնեց յղել յիշեալ եկեղեցին:

Ժողովը որոշեց յղել Յարութիւն սարկաւազը Ս. Դանիէլ Վանքին վանահայր Տ. Ստեփաննոս եպիսկոպոսի և յանձնարարել որ առանց կեդրոնէն հրաման ստանալու յիշեալ սարկաւազը վարդապետ չձեռնադրէ:

— Սկիւտարի Թաղ. Խորհուրդը նկատելով որ Ըլէամիճեան Սրբազանի վանքանէն ի վեր մնալուն քարոզիչ մը չունին, խնդրած է Պատրիարքարանէն որ Գալաթեան եղնիկ վարդապետը Ս. Խաչ եկեղեցւոյ քարոզիչ կարգուի, որքան ժամանակ որ մնայ նոյն թաղին մէջ:

— Խառն Ժողովը գումարուեցաւ 9 յունիս Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Ատլանեան Ստեփան փաշայի:

Կարդացուեցաւ վերջին անգամ Դատական նախարարութեամբ ուղղած մէկ թղթիւրէն, և հարկ եղած հրահանգները տրուեցան թուրքերէն թղթակցութեանց զիւանապետ Խաչատուրեան Կարապետ էֆ.ի:

Ժողովը Բալուի առաջ. տեղապահ Վարդան վարդապետի ծերութեան պատճառով տուած հրաժարականը նկատողութեան առնելով, Կրօն. Ժո-